4/17 ՆՈՅԵՄԲԵՐ 1903.
Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 21

# ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագին՝ 10 Ֆր. տարեկան

Հասցէ՝
Ред. на в. " ВЕРАДЗНУТЮНЪ ". — Русе
Réd. du jour. „VERADZNOUTIOUN" Roustchouk

## ՎԱՏԵՐԸ

Սպանութեան փորձ մեր ամենասիրելի ընկեր Աւետիս Նազարբէկի ինչպէս և Սապահ-Գիւլեանի վրայ, վերջինիս ինչ որ «դժոխային մեքենայի» միջոցով, աղարտուած դժոխքի զաւակներից, Լօնդօնում մեր անմոռանալի ընկերներ Սագունիի, Համբի և Արտօդի զոհ գնալը աննկարագրելի միջոցի,—այդ բոլորը ծանր հարուածներ են մեզ համար, անփոխարինելի կորուստներ ։ Նրանք իրենց արիւնը թափելու էին մօտալուտ ապագայում Երկրի արիւնոտ դաշտերում ու լեռներում կռուելիս մեր բոլորիս նպատակի համար, փոխանակ զոհ գնալու քստմնելի դաւադրութեան ։

Հարուածը խիստ էր, կորուստը մեծ ։

Ողբա՞լ մեր թանկագին ընկերների կորուստը, վայնասո՞ւն բարձրացնել, հրապարակը հեղեղել «ախ»-երով ու «վախ»-երով ... Ա՜հ, ոչ ։ Ժամանակներ կան, երբ մարդ անծայր ու խոր վշտով համակուած՝ անկարող է ըզգում իրեն լաց լինելու, արցունք չի լինում, որ թրջէ հրայայտ աչքերը, երբ լեզուն չի կարողանում արտասանել և ոչ մի բառ, երբ չի գտնում խօսքեր, որոնցով կարողանայ պատկերացնել իր ներքին ամբողջ աշխարհը, որը յուզւում է, փոթորկւում՝ ինչպէս մի կատաղի ովկիան, որոնցով կարողանայ նկարագրել իր խորին վիշտն ու զայրոյթը՝ ընդդէմ վատերի ։ Եւ այդպիսի ժամանակներում մարդ անկարող է լինում ողբալ իր սիրելիների կորուստը, միայն երեսի մկաններն են, որ երբեմն ցնցւում են, միայն յօնքերն ու ճակատն են, որ միշտ մռայլ են ու կնճռոտ, և աչքերն, որոնք բոցավառ են, կատաղի ։ Եւ վայել էլ չէ յեղափոխականին արտասուելը, վայնասուն գցելը և կամ կոծերի, գժութիւնների առաջ վհատելը ։ Ո՛չ, դա կարտասորայով կուսակցութիւնը ։ Նա ամենայն պաղարիւնութեամբ, անվրդով ու խրոխտ պիտի կրէ՝ գաղափարի իրականացման համար՝ ամէն մի մեծ ու փոքր զրկանք, հարուած, կորուստ, եղել է նա իւրը, ընկերոջը, կամ կուսակցութեանը, որին պատկանել է ինքը հոգով ու սրտով, իր ամբողջ էութեամբ ։ Ճանապարհը՝ դէպի վսեմը, արդարութիւնն ու հաւասարութիւնը, սօցիալիզմի թագաւորութիւնը, այդ երանելի ապագան՝ այս աշխարհում՝ միմիայն արիւնով, զոհերով է, որ պիտի հարթուէ անշուշտ ։

Այդ ապագայի համար ընկնողները, նրա համար արիւն թափողները միայն անմահանում են և դրանով իրենց ընկերների մէջ առաջացնում՝ նոր էներգիա՝ թափով նետուելու հասարակական ասպարէզը, մտրակելու ամէն կարգի նողկալի սրտի տէր տիպերին, «ազգային գործիչներին» ։ Նրանք միևնոյն ժամանակ իրենց արիւնով ու մահով մեզ կտակում են աւելի ևս պինդ, համոզուած ու հաւատարիմ փարել այն դրօշին, որի տակ ինկան իրենք՝ անողոք կռւի ժամանակ՝ ընդդէմ վատերի և նրանց հովանաւորող բարբարոսների ։

Մէկի կատարած սխալը իրաւունք չի տալիս մի ուրիշին նոյնը անելու, մէկի արած դաւադրութիւնը չի արդարացնի միւսին, որը նոյն միջոցն է գործ դնում հակառակորդի դէմ, մէկի գործած քստմնելի ոճիրը՝ իրաւունք չի տալիս մի ուրիշին նոյն նողկալի միջոցին դիմելու ։ Ո՛չ ։ Սպանութեանը պատասխանել սպանութեամբ, ոճիրին՝ ոճիրով, դաւադրութեանը՝ դաւով և այդ բոլորով ապականել հասարակական գործունէութեան ասպարէզը, վարկաբեկել, խայտառակել Յեղափոխական կուսակցութիւնները և հայ ժողովուրդը՝ Եւրոպայի առաջ — հաւատացէք ընթերցող — վերին աստիճանի դատապարտելի յանցանք է, որի հեղինակները, վատերը, բարոյապէս պիտի մահանան հասարակութեան առաջ, պիտի անողոք կերպով խարազանուեն, վարկաբեկուեն և ի վերջոյ դուրս շպրտուեն բոլոր հասարակական գործերի միջից ։ Եւ մենք ատրճանակով ու դաշոյնով չէ՛ որ պիտի պատասխանենք մեր երդուեալ թշնամիներին, այլ մամուլով և միմիայն մամուլով, որը հիմնուած պիտի լինի զուտ գաղափարական հողի վրայ ։ Նրանք կատարեցին պժգալի դաւադրութիւնը, բայց մենք նոյնը չանենք, նոյն միջոցով չը լուծենք մեր վրէժը ։ Ամօթ է հայութեան համար ։

Լօնդօնեան ահաւելի դրաման ցնցեց բոլորին ։

Դա գալիս է նորից վրդովելու, յուզելու հասարակական [illegible] կարծիքը և նրա աչքում աւելի ևս գցելու, արդէն բաւականաչափ, նոյն մեր հակառակորդների ձեռքով, ընկած, վարկը՝ ամբողջ հայ Յեղափոխութեան ։ Անկասկած, վարկը, բարոյականը՝ հասարակական որ և է կուսակցութեան յարատև գոյութեան, նրա անարգել, անսայթաք առաջխաղացման և աջող գործունէութեան՝ ամենաառաջնակարգ և ամենաանհրաժեշտ պայմաններից, հիմնաքարերից մէկն է ։ Եւ կուսակցական, աշխարհիկական քննադատութեանը յագուրդ տալու համար՝ աշխատել վերացնել այդ հիմնաքարերից մէկը, — կը նշանակէ մի մեծ և կարևոր ծառայութիւն մատուցանել Ցարին ու նրա եղբայր Սուլթանին, կը նշանակէ դրանով նպաստել բարբարոսութեան շարունակելուն և յետաձգել ժողովրդի փրկութեան գործի համար մղուելիք կռւի վերջնական յաղթանակը, եթէ չասենք իսպառ վտանգել այն ։

Այդ դրաման, մեր ընկերների եղերական մահը, գալիս է միևնոյն ժամանակ մի աւելորդ անգամ ևս ապացուցելու մեր հակառակորդների «թաքթիքի» ամբողջ եղեռնական լինելը, ցոյց տալիս թէ ո՛րքան հեռու են նրանք հասարակական գործիչ բարձր անունը, կոչումը կրելու արժանաւորութիւնից, թէ որքան ընկած են բարոյապէս, հոգով ու սրտով փչացած, նեխուած և հետևապէս բացարձակօրէն անպէտք և միանգամայն վտանգաւոր — աւելի քան Ցարն ու Սուլթանը, որովհետև ներքին թշնամիներ են — հասարակական, հանրամարդկային մեծ գործի համար ։

Այդ պարոնները կարծում են թէ Յեղափոխական ոևէ խմբակ կամ կուսակցութիւն՝ իրեն համար է, որ գոյութիւն ունի, իրեն համար է, որ գործում է և իրեն է միայն, որ պարտաւոր է հաշիւ տալ իր ազգավնաս գործունէութիւնների՛ համար ։ Տխմարնե՛ր ։ Արդեօ՞ք մոռացել էք, թէ վերջին սպանութիւնները, ինչպիսի պարագաներում է, որ երևան են գալիս, ի՞նչ չարիքներ է, որ հասցնելու են Յեղափ. կուսակցութիւններին և հետևապէս հայկական դատին, թէ ո՞ր աստիճան զզւանքով են վերաբերւելու ձեզ՝ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, հայ ժողովուրդը և նոյնիսկ ձեր միամիտ շարքերը ։ Բայց ի՞նչ ։ Երբ մի խմբակ եղեռնական է, նրա համար դժւարին ոչինչ չըկայ, նրա համար ոչ մի սրբութիւն, ազնուութիւն, գրական էթիկա, գոյութիւն չունի, նա ամէն ձևի և գոյնի տակ էլ ընդունակ է երևան գալու՝ նայած հանգամանքների և մարդկանց թելադրութեանը ։ Ա՜հ, ստորաքարշ, գարշելի կեղծաւորներ, դիմակաւորներ ։

Լօնդօնեան քստմնելի դրաման կուրախացնէ մեր բարբարոս թշնամիներից՝ Ցարին և Սուլթանին, որովհետև դրանց փայփայած դժոխային միտքն է՝ վերջ դնել Յեղ. կուսակցութիւնների վարիչների արդիւնաւոր և իրենց տիրանիայի համար վտանգաւոր կեանքին, — մեռցնելու (???) համար Գաղափարը, որի կրողներն ու քաջամարտիկ զինուորներն են այդ ղեկավարները ։ Մի վայրենի և միանգամայն հրէշաւոր միտք, որը այժմ փորձում է գործադրել, իրականացնել հայ, սկզբից ի վեր դասադիր, խմբակը, հայ կեանքի այդ պժգալի արատը, թերևս իրեն աչքից ունենալով այդ երկու

